#eu4business

Eastern Partnership

Եվրամիությունը EU4Business նախաձեռնության միջոցով ֆինանսավորում, վերապատրաստում և դեպի նոր շուկաներ արտահանման աջակցություն է տրամադրում հայաստանյան ընկերություններին

# ԵՄ-Ն ՆՊԱՍՏՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԶՈՐԱՑՄԱՆԸ

## ՈՎՔԵ՞Ր ԵՆ ԱՐԴԵՆ ՕԳՏՎԵԼ?



### ԻՆԳԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ ՈՃԱԲԱՆ

Ընդլայնել է իր տրիկոտաժի արտասահմանյան բիզնեսը՝ բրենդինգի, վաճառքի և կապերի հաստատման, ինչպես նաև արտասահմանյան առևտրի տոնավաճառներում մասնակցության հարցերում ԵՄ խորհրդատվական աջակցության օգնությամբ:



### ՄԱՆԵ ՎԱՐՈՍՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ

Գրավել է Եվրոպական ներդրողների ուշադրությունը իր թվային ստարտափով՝ ստանալով ԵՄ մենտորություն և գործնական աջակցություն իր լրացված իրականության հարթակի համար:



### ՎԱՀԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՑԹՈՒԽ

ԵՄ-ից ստացած երկու վարկերի շնորհիվ վերափոխեց իր բիզնեսը, ինչը նրան հնարավորություն տվեց տեղադրելու էներգաարդյունավետ գազի վառարաններ: Վահանի բիզնեսն ընդլայնվեց, և նա այժմ ապահովում է 11 մարդու զբաղվածություն:

## EU4BUSINESS-Ը ԹՎԵՐՈՎ (2009-2017)

ԵՄ ներդրումը՝ **37** մլն եվրո

Ընկերություններին տրամադրվել են **417** մլն եվրոյի չափով վարկեր

Աջակցություն են ստացել **13,300** ձեռնարկություններ (վարկեր, վերապատրաստում, խորհրդատվություն)

Ստեղծվել են **2,500** նոր աշխատատեղեր

Նպաստելով արտահանման աճին

Խթանելով ՓՄՁ-ների աճը

Ընդլայնելով առևտրի հնարավորությունները

# ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՌԱՎԵԼ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

- Վարկերի տրամադրում կանանց կողմից ղեկավարվող ձեռնարկություններին
- Միկրովարկերի տրամադրում փոքր ձեռնարկություն ստեղծելու կամ զարգացնելու համար
- Դրամաշնորհների տրամադրում նորարարական և բարձր տեխնոլոգիական ստարտափներին

## ԳՈՐԾԱՐԱՐ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ

- Մարդկային ռեսուրսների, տեղեկատվական տեխնոլոգիաների և կառավարման ոլորտներում անհատական խորհրդատվական ծառայությունների և տեխնիկական աջակցության տրամադրում ընկերություններին
- Ձեռնարկատերերի հմտությունների բարելավմանն ուղղված վերապատրաստման ծրագրեր
- Անհատական վերապատրաստում և ուղղորդում կին ձեռնարկատերերի համար
- Մենտորինգ և բիզնես աջակցություն ստարտափներին

## ՆՈՐ ՇՈՒԿԱՆԵՐ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼՈՒ ԱՎԵԼԻ ԼԱՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Արտահանման ուղղվածություն ունեցող ընկերությունների համար գործարար խորհրդատվության տրամադրում և վերապատրաստում

# EU4BUSINESS-ը ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Իր հիմնադրման պահից EU4BUSINESS նախաձեռնությունն աջակցել է Հայաստանում 18 ծրագրերի:

Հայաստանում EU4BUSINESS նախաձեռնության միջոցով վարկեր ստացած ՓՄՁ-ները արձանագրել են շրջանառության աճ և աշխատատեղերի ավելացում: Բազմաթիվ ընկերություններ ստացած վարկի արդյունքում ունեցել են մինչև 50% շրջանառության աճ, իսկ ընկերությունների 15%-ը՝ նույնիսկ դրանից ավելին:

Հայաստանն ունի 59,467 միկրո ձեռնարկություններ: Հայաստանում ՓՄՁ-ները զգալիորեն նպաստում են զբաղվածությանը և աշխատատեղերի ստեղծմանը՝ մասնավորապես 2017 թվականին, ընդհանուր առմամբ աշխատողների քանակը կազմել է 168,185 (Աղբյուրը՝ ՀՀ Վիճակագրական Կոմիտե)

ԵՄ-ն հայաստանյան ընկերություններին աջակցում է EU4Business նախաձեռնության միջոցով և գործակցում է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (EBRD), Եվրոպական ներդրումային բանկի (EIB), Վերականգնման վարկերի բանկի (KfW), Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ), Առևտրի միջազգային կենտրոնի, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD), Համաշխարհային բանկի, Հայաստանի Փոքր և Միջին Ձեռնարկատիրության Զարգացման Ազգային Կենտրոնի (ՓՄՁ ԶԱԿ) և Մայքրոսոֆթ Ինովացիոն Կենտրոն Հայաստանի հետ:

EU4Business

Պարզեք, թե ինչ է հասանելի.
www.eu4business.eu/am

EaP | Eastern Partnership